

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

**Արվեստի պատմության, տեսության եվ մշակութաբանության ամբիոնի
վարիչի թափուր պաշտոնի համար.**

Ամբիոնի վարիչի պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել՝

- արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան («կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ) կամ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան («կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ) և պրոֆեսորի գիտական կոչում կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հավակնորդները համալսարանի **գիտական քարտուղարին** են ներկայացնում.

- դիմում ռեկտորին,
- կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
- համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
- տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 9⁰⁰-ից 17⁰⁰-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտական քարտուղարին:

հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 17, թիվ 302 սենյակ,
հեռ՝ 59-70-28:

11.10.2019